ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՍԱՎՈՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԳՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ



ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՕԲՅԵԿՏԻՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ



ՀԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2007

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ**

Սույն ուսումնասիրությունը և հրապարակումը ֆինանսավորվել են
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի կողմից:

Ծրագրի աշխատակազմ

Սոնա Այվազյան
ղեկավար

Արամայիս Խաչատրյան
իրավական հարցերով փորձագետ

Լևոն Հովսեփյան
գնումների հարցերով փորձագետ

Սառա Պետրոսյան
լրագրող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ ____ 5
Ներածություն ____ 6
Մեթոդաբանություն ____ 6
Ուսումնասիրության արդյունքներ ____ 8
Ինստիտուցիոնալ ցուցանիշներ ____ 8
Ընկալման ցուցանիշներ ____ 10
Կատարողականի ցուցանիշներ ____ 12
Միջավայրի ցուցանիշներ ____ 12
Եզրակացություն ____ 13
Առաջարկություններ ____ 15
Հավելվածներ
Ա. Քաղվածք ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայից ____ 17
Բ. Քաղվածք Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. մարտի 31-ի թիվ 2004/18/ԵԽ «Հանրային աշխատանքների պայմանագրերի, հանրային մատակարարման պայմանագրերի և հանրային ծառայությունների մատուցման պայմանագրերի շնորհման ընթացակարգերի համակարգման մասին» դիրեկտիվից ____ 18
Գ. ԹԻ «Հանրային պայմանագրերի նվազագույն ստանդարտներ» ____ 19
Դ. Ինստիտուցիոնալ ցուցանիշներ ____ 21
Ե. Ընկալման ցուցանիշներ ____ 35
Զ. Կատարողականի ցուցանիշներ ____ 39
Է. Միջավայրի ցուցանիշներ ____ 40

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՄ	Եվրամիություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ՀԳՀՊ	Հանրային գնումների համակարգի պատկերումը
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԶԿ/ԹԻ-Հայաստան	Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան
ՖԷՆ	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային գնումները հանրային ֆինանսական միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է: Համարվում է, որ լավ աշխատող գնումների համակարգը նպաստում է հանրային ծախսերի կանոնակարգված իրականացմանը, հանրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, թափանցիկությանը և հաշվետվողականությանը: Մինչդեռ, հանրային գնումներին առնչվող հարցերը բավականին բարդ են և ենթակա կոռուպցիոն գործընթացների: Ուստի, կոռուպցիան կանխարգելելու և գնումների համակարգերն ուժեղացնելու համար վճռորոշ նշանակություն ունեն գործընթացների թափանցիկությունն ու հավաստի տեղեկատվության մատչելիությունը:

Հանրային գնումների համակարգի պատկերումը (ՀԳՀՊ) մի մեթոդ է, որը մշակվել է 2005թ. Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) կազմակերպության կողմից, որը քաղաքացիական հասարակության՝ աշխարհով մեկ գործող և կոռուպցիայի դեմ պայքարող կառույց է: ՀԳՀՊ-ի նպատակն է գնահատել գնումների ազգային համակարգերը: Այն մշակված է՝ բացահայտելու և չափելու համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև ներկայացնելու առաջարկներ՝ իրականացնելու համապատասխան միջազգային պարտավորությունները և ապահովելու գործընթացների թափանցիկությունը՝ այդպիսով խթանելով հանրային շահերի պաշտպանությունը և ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մեթոդի համաձայն դիտարկվում են հանրային գնումների ազգային համակարգի համապատասխանությունը կամ շեղումը «իդեալական» համակարգից:

«Իդեալական» համակարգը իրավական ինստիտուցիոնալ ստանդարտների մի խումբ է՝ «լավագույն պրակտիկա», որն ընդգրկում է պլանավորմանը, կանոնակարգմանը, թափանցիկությանը, հաշվետվողականությանը, վերահսկողությանը և քաղաքացիական ներգրավմանն առնչվող հարցեր: Այն մշակվել է՝ հիմք ընդունելով ԹԻ փորձառությունը, գիտահետազոտական աշխատանքը, առկա միջազգային ուղեցույցները և լավագույն փորձը: Մասնավորապես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար «իդեալական» համակարգն ուրվագծված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, Եվրոմիության (ԵՄ)՝ գնումներին առնչվող հրահանգների, ինչպես նաև՝ ԹԻ «Հանրային պայմանագրերի նվազագույն ստանդարտների» հիման վրա (տես **Հավելվածներ Ա, Բ** և **Գ**):

ՀԳՀՊ-ն առաջին անգամ փորձարկվել է Լատինական Ամերիկայի երկրներում և ներկայումս ներմուծվում է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան, որտեղ առաջինը կիրառվում է Հայաստանում: Ուսումնասիրության իրականացման տարածաշրջանային մոտեցման նպատակը ոչ թե երկրները միմյանց հետ համեմատելն է և նրանց գնումների համակարգերը դասակարգելը, այլ տարածաշրջանային մակարդակով ընդհանուր պատկերացում կազմելը:

Ուսումնասիրությունն իրականացվել է «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան» (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) հասարակական կազմակերպության կողմից 2007թ. ընթացքում: Գնահատման առարկան հանդիսացել է ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ազգային օրենսդրության համաձայն իրականացված գնումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԳՀՊ-ն բաղկացած է 139 ցուցանիշներից, որոնք բաշխված են չորս խմբերում. ինստիտուցիոնալ, ընկալման, կատարողականի և միջավայրի: Յուրաքանչյուր ցուցանիշ արտահայտված է որպես «ռիսկի տոկոս» (առավելագույն ռիսկը՝ 100 տոկոս, իսկ դրա բացակայությունը՝ 0): Կոռուպցիոն ռիսկի մակարդակը որոշվում է՝ հաշվի առնելով գնումների գործող համակարգի և «իդեալական» համակարգի միջև առկա անդունդը/տարածությունը: Համարվում է, որ դիտարկվող համակարգում որքան մոտ են ցուցանիշների արդյունքները «իդեալական» համակարգին, այնքան փոքր են կոռուպցիոն ռիսկերը:

Մեթոդաբանության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվության մատչելիության խնդրին՝

ներառելով մի քանի ցուցանիշներ ինստիտուցիոնալ, կատարողականի և ընկալման խմբերում: Ավելին, կատարողականի ցուցանիշները մշակվել են այնպես, որ եթե հարցին չի կարող տրվել պատասխան համապատասխան տեղեկության բացակայության պատճառով, ապա դա համարվում է ռիսկ՝ կապված տեղեկատվություն մատչելիության հետ:

Ինստիտուցիոնալ ցուցանիշերն 92 փակ հարցեր են, որոնք փորձում են պարզել, թե երկրի գնումների ոլորտի օրենսդրությունը և համապատասխան ինստիտուտները ապահովում են արդյոք հիմքեր, որոնք «իդեալական» համակարգում համարվում են կարևոր կոռուպցիան նվազեցնելու առումով: Ինստիտուցիոնալ ցուցանիշները ստացվում են երկրում գնումների ոլորտին առնչվող օրենսդրության ուսումնասիրության արդյունքում: Այս ցուցանիշները «չափում են» հանրային ծախսերի պլանավորումը, ընտրության մեխանիզմները, պայմանագրերի կատարումը, վերահսկողությունը և տեղեկատվության մատչելիությունը:

Հարցերը, որպես կանոն, ձևակերպված են այնպես, որ բացասական պատասխանը ցույց է տալիս կոռուպցիոն ռիսկ: Դրան տրվում է «1» միավոր արժեք, իսկ դրականին՝ «0», բացառությամբ մի շարք հարցերի, որտեղ գործում է հակառակ տրամաբանությունը: Յուրաքանչյուր ցուցանիշի, ելնելով կոռուպցիոն ռիսկի առումով դրա դերից, տրվում է կշիռ, որը բնորոշում է ցուցանիշի համեմատական կարևորության աստիճանը: Կշիռը կոդավորվում է որպես «A», «B», «C», որտեղ A = 3 (բարձր ռիսկ), B = 2 (միջին ռիսկ) և C = 1 (ցածր ռիսկ):

Ընկալման ցուցանիշները 24 բաց հարցեր են, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են գործում գնումների համակարգերը պրակտիկայում: Դրանք ստացվում են անկախ գնահատման և/կամ ֆոկուսխմբերի քննարկման արդյունքում՝ որպես գնումների ոլորտի փորձագետների կարծիքների ամփոփում: Այս ցուցանիշները շոշափում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են գնումների մրցակցային մեթոդների կիրառման բացառությունները, աշխատակազմի մասնագիտական փորձառությունը, շահերի բախումը, պայմանագրերի կատարումը և համապատասխանությունը, հսկողությունը և վերահսկողությունը, հանրային մասնակցությունը և տեղեկատվության մատչելիությունը:

Կատարողականի ցուցանիշները ներառում են 14 «չոր փաստ» ենթադրող ցուցանիշներ, որոնք «հավաքում են» գնումների համակարգերի կիրառման վերաբերյալ կարևոր տեղեկություններ: Կատարողականի ցուցանիշները արտահայտված են տոկոսների տեսքով, և դրանց վերաբերյալ տվյալները ստացվում են հնարավորինս օբյեկտիվ աղբյուրից: Այս ցուցանիշները կենսականորեն կարևոր են ինչպե՛ս պետական կառույցների, այնպե՛ս էլ շահագրգիռ անկախ կողմերի կողմից իրականացվող մոնիտորինգի համար, քանի որ դրանք թույլ են տալիս ուղղակիորեն հետևել օրենսդրության մեջ պարունակվող դրույթների իրականացման որոշ ասպեկտների: Հանրային գնումների վերաբերյալ վիճակագրական տվյալների առկայության փաստը դիտարկվում է որպես լավ պրակտիկա, մինչդեռ տեղեկատվության բացակայությունը համարվում է որպես ռիսկի գործոն:

Միջավայրի (համատեքստի) ցուցանիշները ներառում են 9 թվային ցուցանիշներ, որոնք վերաբերում են երկրի քաղաքական համակարգի, վարչարարության և դատական համակարգի որակին: Չնայած որ դրանք ուղղակիորեն կամ բացառապես չեն վերաբերում հանրային գնումներին, մեթոդը ենթադրում է, որ գնումների գործընթացը տեղի է ունենում ոչ թե մեկուսացված կերպով, այլ համապատասխան ինստիտուցիոնալ և կառավարման դաշտում: Միջավայրի ցուցանիշները վերցվում են ԹԻ-ից անկախ միջազգային հարցումներից կամ աղբյուրներից: Աղբյուրներն ընտրվում են՝ ելնելով դրանց մատչելիությունից, մեթոդաբանությունը կիրառող երկրների մեծ մասի վերաբերյալ տվյալների առկայությունից և տարեկան կտրվածքով հրապարակումից, որպեսզի հնարավոր լինի դրանց օգտագործումը մոդելը ցանկացած ժամանակ կիրառելիս:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ինստիտուցիոնալ ցուցանիշներ

Գնումների օրենսդրության ուսումնասիրությունը կատարվել է 2007թ. հունվար-մայիս ամիսներին, իսկ արդյունքները ճշտվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (ՖԷՆ) գնումների գործընթացի կարգավորման և բյուջետային գործընթացի մեթոդաբանության վարչության հետ 2007թ. դեկտեմբերին: «Գնումների մասին» ՀՀ օրենքից և մոտ 30 ենթաօրենսդրական ակտերից բաղկացած Հայաստանի գնումների համակարգի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ազգային օրենսդրությունը և ինստիտուտները ընդհանուր առմամբ կոռուպցիոն ռիսկերի բարձր մակարդակների չեն հանգեցնում (տես մանրամասները **Հավելված Դ**-ում): Ինստիտուների հետ կապված միջին կոռուպցիոն ռիսկերը հավասար են 30.85 տոկոսի: Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են **Պատկեր 1**-ում:

Պատկեր 1



Ուսումնասիրության արդյունքում մասնավորապես պարզվել է հետևյալը.

- Կոռուպցիոն ամենաբարձր ռիսկերը՝ 66.67 տոկոս, առկա են հանրային ծախսերի պլանավորման գործընթացում: Այս ռիսկերը հիմնականում կապված են պլանների ու ծրագրերի ձևավորման և առաջնահերթությունների որոշման, ինչպես նաև բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության բացակայության հետ: Որպես կանոն, ՀՀ կառավարության կողմից հաստատվող պլանների և ծրագրերի մասին ընդհանուր տեղեկություններ տրվում են զանգվածային լրատվամիջոցներով (ԶԼՄ) կամ տեղադրվում էլեկտրոնային կայքում այն ժամանակ, երբ որոշումներն իրավական ակտերի տեսքով արդեն ընդունված են լինում, իսկ դրանց տեքստերը մատչելի են դառնում միայն «ՀՀ իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրում» հրապարակումից հետո:

Ինչ վերաբերում է բյուջետային գործընթացին, ապա ազգային օրենսդրությունն ապահովում է միայն բյուջեների նախագծերի հրապարակումը տպագիր մամուլում և ՀՀ ազգային ժողովում ընթացող համապատասխան քննարկումների հեռարձակումը:[1] Քաղաքացիական հասարակության մասնակցությունը չի ապահովվում բյուջետային գործընթացի և ոչ մի փուլում:

[1] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդ. 26:

Մեկ այլ ռիսկ կապվում է այն դրույթի հետ, որ բյուջեի հաստատումը պարտադիր պայման չէ գնումների գործընթացը նախաձեռնելու համար, քանի որ դա կարող է նպաստել հայեցողական որոշումների ընդունմանը և պաշտոնական դիրքի չարաշահմանը:[2]

- Տեղեկատվության մատչելիության հետ կապված կոռուպցիոն ռիսկերը գնահատվում են 25.00 տոկոս: Այստեղ հիմնախնդիրը պահանջների բացակայությունն է՝ հրապարակելու պայմանագրերի իրականացման ժամկետները և դրանցում առաջարկվող ու ընդունվող փոփոխությունները, մասնակիցների գրանցամատյաններում ներառելու գնումների մասնակիցների կողմից իրականացված պայմանագրերի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ տույժերը և այլ պատժամիջոցները, ապահովելու հանրային գնումներին առնչվող կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ քննությունների արդյունքների հրապարակայնությունը: Որոշ ռիսկեր առնչվում են այն փաստին, որ գնումների ոլորտի օրենսդրության մեջ չկան դրույթներ, որոնք կպարտադրեին տեղեկատվության տարածումը էլեկտրոնային եղանակով:[3]
- Գնումների գործընթացների վերահսկողությունը պարունակում է 24.51 տոկոս կոռուպցիոն ռիսկ. այն կարող է առնչվել շահերի բախման իրավիճակները կարգավորող դրույթների բացակայությանը, վերահսկողական և իրավապահ կառույցներում գնումների հետ կապված հարցերով զբաղվող հատուկ ստորաբաժանումների բացակայությանը և պետական պաշտոնում հարստանալու նկատմամբ վերահսկողության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների անբավարարությանը:
- Կոռուպցիոն ռիսկերը պայմանագրերի կատարման և իրականացման գործընթացում հավասար են 21.43 տոկոսի: Սա հիմնականում բացատրվում է նրանով, որ օրենսդրությամբ չի պահանջվում հատուկ ապահովագրական համակարգ, որը երաշխիք կհանդիսանար պայմանագրի պատշաճ կատարման համար:
- Ընտրության մեխանիզմները պարունակում են ռիսկի ամենափոքր մասնաբաժինը՝ 16.67 տոկոս: Ըստ մեթոդաբանության, դրանք առաջանում են, քանի որ մրցույթային փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները ենթակա չեն հանրային լսումների, չկան ազգային մատակարարների ռեգիստրներ և հրապարակային գնացուցակներ: Բացի այդ, ռիսկեր առկա են այն դրույթներում, որոնք ամրագրում են, որ բաց մրցույթների բացառություններ կարող են լինել ոչ միայն արտակարգ իրավիճակների, պետական գաղտնիքի կամ միայն մեկ աղբյուրի առկայության, բայց նաև այնպիսի դեպքերում, ինչպիսին է գնման անհետաձգելի պահանջը, որը հնարավոր չէր կանխատեսել և, ըստ այդմ, կազմակերպել բաց մրցույթ:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտված, թեպետ մեթոդաբանությամբ և համապատասխան արդյունքներում չարտացոլված, հիմնախնդիրներն առնչվում են գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերի անհամապատասխանություններին: Դա բացատրվում է այն փաստով, որ որոշ ենթաօրենսդրական ակտեր մշակվել են գնումների մասին նախորդ օրենքի շրջանակներում, դրանց որոշ մասեր ուժը կորցրած են ճանաչվել, և այսպիսով դժվար էր առանց ՖԷՆ-ի պաշտոնյաների հետ խորհրդակցելու հասկանալ, թե որ դրույթներն են գործում և որոնք՝ ոչ: Այս խնդրին ներկայումս անդրադարձ է կատարվում համապատասխան պետական կառույցների կողմից, և փոփոխությունների նախագիծը տեղադրված է ՖԷՆ-ի էլեկտրոնային կայքում՝ դիտողությունների և առաջարկությունների համար:

Լուրջ մտահոգություններ են կապված այն փաստի հետ, որ գնումների մի մեծ ծավալ երկրում իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերի շրջանակներում

[2] ՖԷՆ մեկնաբանության համաձայն, այս դրույթը մշակվել է՝ ապահովելու գնումների գործընթացի ճկունությունը, և պայմանագրերը փաստացի ուժի մեջ են մտնում միայն դրանցով նախատեսված ֆինանսավորման հատկացման դեպքում:

[3] Իրականում, ՀՀ ՖԷՆ «Գնումների պաշտոնական տեղեկագիրը» պարբերաբար տեղադրվում է ինտերնետային կայքում:

ֆինանսավորվող ծրագրերով և դուրս է մնում ՀՀ գնումների ոլորտի օրենսդրության գործողության շրջանակից: Օրինակներն ընդգրկում են Համաշխարհային Բանկի հետ պայմանագրերի, Լինսի հիմնադրամի հետ Փոխըմբռնման հուշագրի կամ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի հետ պայմանագրի շրջանակներում իրականացվող գործողությունները: Դրանք, նույնիսկ եթե համապատասխանում են լավագույն միջազգային ստանդարտներին, գործում են ոչ թափանցիկ կերպով և մտահոգություն են առաջացնում գնումների գործընթացների օրինավորության առումով:

Մասնավորապես, Լինսի հիմնադրամի հետ Փոխըմբռնման հուշագրի մատչելիությունն ինքնին սահմանափակ է, քանի որ այս փաստաթուղթը, որը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է որպես Հայաստանի սահմանադրությանը չհակասող և վավերացվել ՀՀ ազգային ժողովի կողմից, համարվում է գաղտնի փաստաթուղթ[4]: Մեկ այլ օրինակ է Համաշխարհային բանկի ոռոգման ծրագիրը, որտեղ Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակը բանավոր մերժել է գնումներին առնչվող փաստաթղթեր տրամադրելը, հիմնավորելով, որ արդեն իսկ կան իրենց գործունեության չափից շատ վերահսկողներ: Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի հայաստանյան ծրագրի շրջանակներում գնումները համեմատաբար առավել թափանցիկ են և որոշ տեղեկատվություն զետեղվում է էլեկտրոնային կայքում, այնուամենայնիվ, այն չի ապահովում նույն աստիճանի տեղեկատվության մատչելիություն մրցույթային գործընթացների համար՝ ինչպես ազգային օրենսդրությունը:

Ընկալման ցուցանիշներ

ՀՀ ՖԷՆ-ի, «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ), Հայաստանի և Եվրոպայի քաղաքականության և իրավական հարցերի խորհրդատվական կենտրոնի (AEPLAC) և մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ֆոկուսխմբային քննարկումը կայացել է 2007թ. նոյեմբերի սկզբին: Այն կառուցված էր ընկալման ցուցանիշների շրջանակներում և բացահայտել է 58.33 տոկոս կոռուպցիոն ռիսկ (տես **Հավելված Ե**):

Քննարկման ընթացքում շահագրգիռ կողմերի կողմից հնչեցված ընդհանուր տեսակետն այն էր, որ Հայաստանում գնումների ոլորտի օրենսդրությունը բավական չափով ձևավորված է: Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2005թ., մեծ մասամբ հիմնված է եղել Համաշխարհային բանկի 2004թ. «Երկրի գնումների գնահատման զեկույցի» և դրա առաջարկությունների վրա, այն հիմնականում համապատասխանում է միջազգային չափանիշներին, իսկ դրա իրականացման գործընթացներն աստիճանաբար բարելավվում են: Սա մասնավորապես ճիշտ է բողոքների քանակի աճի առումով, ինչն, ի վերջո, հանգեցնում է կիրարկման ընթացակարգերի կատարելագործմանը: Ֆոկուսխմբի անդամների կարծիքով դրական քայլ է համարվել ՀՀ կառավարության մտադրությունը՝ ներդնելու գնումների էլեկտրոնային համակարգը և այդ նպատակով էական ֆինանսավորում նախատեսելու 2008թ. բյուջեում:

Քննարկման արդյունքում բացահայտված խնդիրները ներառել են հետևյալը.

- Մրցակցային մեթոդների կիրառումը մյուսների համեմատ զգալիորեն աճել է, ինչը կարելի է բացատրել գնումների օրենսդրության կիրառման բարելավմամբ, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող պլանավորման կատարելագործմամբ:

[4] Լինսի հիմնադրամի հետ Փոխըմբռման հուշագրի պատճենը ստանալու վերաբերյալ ՏԶԿ/ԹԻ-Հայաստան կազմակերպության խնդրանքին ի պատասխան՝ 2007թ. հոկտեմբեր ամսին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտնել է, որ տվյալ հուշագրով Հայաստանը ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ ապահովելու փաստաթղթում առկա տեղեկատվության կոնֆիդենցիալությունը և երրորդ կողմի համար անմատչելիությունը: Եվ քանի որ ՀՀ սահմանադրության համաձայն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը գերակայություն ունեն ՀՀ իրավական համակարգում՝ փաստաթղթի պատճենը չի կարող տրամադրվել:

Այնուամենայնիվ, հնարավոր է նաև, որ մրցույթների մի մասը լինի կեղծ. դրանք նախընտրելի են մեկ անձից գնումների համեմատ, քանի որ անպայմանորեն հարցականի տակ չեն դնում գնումների օրինավորությունը և առավել լավ են քողարկում կոռումպացված գործընթացները:

- Չնայած գնումների մեթոդների ակներև տարբերակմանը, դրանք հնարավոր է, որ ոչ ճիշտ կիրառվեն գնումներ իրականացնող կառույցների կողմից: Մեկ անձից գնումների զգալի բաժինն իրականացվում է կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտներում, ինչը ոչ միշտ է հիմնավորված:
- Ընդհանուր առմամբ, գնման առարկայի բնութագրերի մշակումը, մասնավորապես խորհրդատվական ծառայությունների դեպքում, հնարավոր է մանիպուլյացիայի ենթարկել՝ սահմանափակելու ընտրությունը հօգուտ կանխորոշված մասնակցի:
- Շահերի բախման դեպքերը չեն ուսումնասիրվում օրենսդրության համապատասխանության հսկման ընթացքում, քանի որ դրանք չեն կարգավորվում գնումների մասին օրենսդրությամբ: Որոշ ընդհանուր բնույթի շահերի բախման իրավիճակների անդրադարձ կատարվում է քաղաքացիական ծառայության ոլորտի օրենսդրությամբ: Սակայն այս դրույթները չեն առնչվում հանրային գնումների համար հատկանշական իրավիճակներին: Օրինակ՝ պաշտոնյաները, որոնք պատրաստում են մրցույթի հրավերն ու գնման առարկայի բնութագրերը, և այնուհետև մասնակցում հայտերի գնահատմանը, կարող են չարաշահել իրենց դերը, մինչդեռ այս բախումը չի կարգավորվում քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ:
- Մրցույթային հանձնաժողովներում ոչ միշտ է ապահովվում փորձագիտական համապատասխան մակարդակ՝ գնահատելու հայտերը, և նման դեպքերն առավել հաճախ են մարզպետարանների՝ Հայաստանի կառավարության տարածքային մարմինների կողմից իրականացվող գնումների դեպքերում:
- Շատ տվյալներ առկա չեն գնումների գործընթացների վերահսկողության որակի, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ: Վերահսկողությունը ակնկալվում է բարելավել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում: Ելնելով նրանից, որ վերահսկողությունը հիմնականում կատարվում է գնում իրականացնող կառույցների կողմից, որոնք նաև պատասխանատու են եղել մրցույթների հրավերների մշակման և հայտերի գնահատման համար այնպիսի միջավայրում, երբ բավականին շատ հնարավորություններ են առկա բարձրաստիճան պաշտոնյաների կողմից քաղաքական ճնշումների համար, հնարավոր են շահերի բախման իրավիճակներ և վերահսկողության ոչ պատշաճ որակ: Արտաքին վերահսկողական մարմինը՝ ՀՀ վերահսկիչ պալատը վերակազմավորվել է և դեռևս շուտ է դատել դրա գործունեության արդյունքների մասին:
- Տեղեկատվության մատչելիությունը գործնականում կարելի է համարել սահմանափակ: Գնումների պաշտոնական տեղեկագիրը արդյունավետ միջոց չի համարվում, քանի որ այն հրապարակվում և տեղադրվում է ինտերնետային կայքում 1-2 ամիսը մեկ անգամ, և մինչ դրա տարածվելը ընկերությունների շրջանում, որոշ մրցույթների տվյալները հնանում են: Ֆոկուսխմբի մասնակիցներն ընդունել են, որ տեղեկատվության հրապարակումը զուտ էլեկտրոնային տարբերակով և դրա անընդհատ թարմացումը կբարելավեն տեղեկատվության որակը և տարածումը:
- Տեղեկատության սահմանափակ մատչելիության մեկ այլ օրինակ է այն, որ հրապարակվող տվյալները չեն ընդգրկում պայմանագրերի իրականացման ժամկետները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ պատշաճ հասարակական մոնիտորինգի համար:
- Առանձին տվյալների, ինչպիսիք են՝ երկրաբանական տվյալները կամ քարտեզները, մատչելիությունը կարող է չարաշահվել և հանգեցնել մեկ աղբյուրից գնման:

- Բացակայում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածությունը հանրային գնումների գործընթացների մոնիտորինգում, ինչպես նաև գնումների մասին ազգային օրենսդրությամբ ապահովվող՝ տեղեկատվության մատչելիության և հասարակության մասնակցության գործիքների կիրառման պրակտիկան: Այս թերությունը կարելի է բացատրել գնումների վերաբերյալ ՀԿ-ների գիտելիքների բացակայությամբ և տվյալ ոլորտում ներգրավվելու սահմանափակ հետաքրքրությամբ:
- Գնումների ոլորտում արդարադատության հասնելու համար հազվադեպ է կիրառվում դատական համակարգը: Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակչությունը հակված չէ դիմելու դատարաններ, քանի որ վերջիններս համարվում են ոչ արդյունավետ և կոռումպացված: Բացի այդ, թեպետ բացակայում է նման փորձը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից հանրային շահերը պաշտպանելու նպատակով դատարան դիմելու հնարավորությունները կարող են սահմանափակվել, քանի որ բողոք ներկայացնող կազմակերպությունները կարող են ճանաչվել ոչ պատշաճ հայցվոր այն հիմքով, որ նրանց սեփական իրավունքները չեն ոտնահարվել:

Գնումների պրակտիկայի հետագա կատարելագործումը կապվում է էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման հետ:[5]

Կատարողականի ցուցանիշներ

Կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները հարցման միջոցով ստացվել են ՀՀ ՖԷՆ գնումների գործընթացի կարգավորման և բյուջետային գործընթացի մեթոդաբանության վարչությունից: Այս խմբի կոռուպցիոն ռիսկերը կազմում են միայն 19.57 տոկոս:

Հայաստանի գնումների համակարգի կատարողականը հսկվում է ՖԷՆ-ի կողմից, որը տնօրինում է մեթոդաբանությամբ առաջարկվող վիճակագրական տվյալները, որոնք հավաքվում և պահպանվում են այլ ձևաչափով և տրամադրվում՝ ի պատասխան համապատասխան հարցման (տես **Հավելված Զ**): Առկա չեն հանրային մասնակցությամբ կայացած գնումների և իրենց գնումները ինտերնետային կայքում հրապարակած պատվիրատու կազմակերպությունների մասին տվյալներ:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ կատարողականի ցուցանիշները վճռական նշանակություն ունեն ինչպե'ս համապատասխան մարմինների, այնպե'ս էլ այլ շահագրգիռ կողմերի կողմից իրականացվող մոնիտորինգի համար, խնդիր է հանդիսանում տվյալների հրապարակային աղբյուրների բացակայությունը:

Միջավայրի ցուցանիշներ

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանի քաղաքական, վարչական և դատական համակարգերի համատեքստով պայմանավորված միջին ռիսկը հավասար է 69.26 տոկոսի (տես **Հավելված Է**): Այս ցուցանիշների աղբյուրները ներառում են Համաշխարհային տնտեսական ֆորումի «Համաշխարհային մրցունակության 2007-2008թ. զեկույցը» և Ֆրեյզերի ինստիտուտի «Տնտեսական ազատությունը աշխարհում» 2007թ. զեկույցը: Առաջինը գնահատել է երկրները «1-7» սանդղակով, որտեղ «1» -ը ամենացածր միավորն է, իսկ «7»-ը՝ ամենաբարձրը: Երկրորդ զեկույցի համաձայն, երկրների գնահատումը կատարվել է «1-10» սանդղակով, որտեղ «1»-ը ամենացածր միավորն է, իսկ «10»-ը՝ ամենաբարձրը: Միջավայրի ցուցանիշների տվյալները ներկայացված են **Պատկեր 2**-ում:

[5] Ի հավելումն ՀԳՀՊ մեթոդաբանության՝ ՏԶԿ/ԹԻ-Հայաստան կազմակերպությունը նախաձեռնել է մի քանի լրացուցիչ քայլեր պարզելու օրենսդրության կիրառման վերաբերյալ ընկալումը, ինչը սակայն չի ազդել մեթոդաբանության համաձայն հաշվարկված կոռուպցիոն ռիսկերի վրա: Դրանք ներառել են մի շարք գնումների ընթացակարգերի արձանագրությունների ուսումնասիրություն ու գործարարների հետ հարցազրույցներ և բացահայտել հետևյալ խնդիրները.

- Քաղաքական ճնշումը որոշումների ընդունման գործընթացներում դարձել է կառավարման համակարգի մի մասը: Այդպիսով, լայն տարածված է անվստահությունը որոշումների ընդունման անկողմնակալության նկատմամբ և ընդհանուր համոզմունքը, որ հնարավոր չէ մրցույթում հաղթել առանց «տանիքի»՝ բարձրաստիճան պաշտոնյայի աջակցության:
- Մրցույթային հայտերի գնահատումը հաճախ կատարվում է այնպես, որ հայտերից շատերը մերժվում են մրցույթային փաթեթում այս կամ այն փաստաթղթի բացակայության կամ ձևաթղթերի սխալ լրացման պատճառով: Դրանով մրցակցությունը նեղանում է և հայտերի որակի գնահատումը դառնում ավելի քիչ բովանդակային:

Պատկեր 2



Քաղաքական համակարգի ցուցանիշները վերաբերում են քաղաքական գործիչների նկատմամբ հասարակության վստահությանը, կառավարության կողմից ընդունվող որոշումների անկողմնակալությանը և հանրային քաղաքականության թափանցիկությանը, որոնք բոլորը վերցված են «Համաշխարհային մրցունակության զեկույցից»: Քաղաքական համակարգի հետ առնչվող կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում հավասար են 73.89 տոկոսի:

Վարչարարության որակի գնահատման ցուցանիշները շեշտը դնում են հանրային ռեսուրսների պատշաճ հատկացումների, կանոնակարգերի պարզության և պետական մարմինների կողմից կատարվող ծախսերի արդյունավետության վրա, որոնք բոլորը վերցված են «Համաշխարհային մրցունակության զեկույցից»: Վարչարարության որակի հետ կապված կոռուպցիոն ռիսկերը հավասար են 67.78 տոկոսի:

Դատական համակարգի որակի գնահատականի հիմքում ընկած են դատական իշխանության անկախությունը (վերցված է «Համաշխարհային մրցունակության զեկույցից»), դատարանների անաչառությունը և իրավական համակարգի օրինավորությունը (երկուսն էլ վերցված են «Տնտեսական ազատությունը աշխարհում» զեկույցից): Դատական համակարգի որակով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերը հավասար են 66.11 տոկոսի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես և այլ երկրներում, որտեղ կիրառվել է ՀԳՀՊ մեթոդաբանությունը, Հայաստանում ևս օրենսդրությունը և հաստատությունները ցույց են տվել կոռուպցիոն ռիսկերի համեմատաբար ավելի ցածր մակարդակ, մինչդեռ առավել բարձր ռիսկեր դիտարկվել են իրական պրակտիկայում և ընդհանուր միջավայրում: Ստորև տրված **Պատկեր 3**-ում ներկայացված է ցուցանիշների չորս խմբերի համադրումը, որը նաև ցույց է տալիս առավել կամ ավելի քիչ խոցելի հատվածները: Ինչպես նշվել էր վերևում, որքան մոտ են արժեքները «իդեալականին», այնքան ցածր են կոռուպցիոն ռիսկերը դիտարկվող համակարգում:

Պատկեր 3



ՀԳՀՊ մեթոդաբանության համաձայն, երբ արդյունավետ ու թափանցիկ գնումների համակարգ ապահովելու համար հիմնված իրավական և ինստիտուցիոնալ դաշտը դիտարկվում է ընդհանուր միջավայրում, որտեղ կոռուպցիոն ռիսկերը ավելի են 50 տոկոսից, Հայաստանը հայտնվում է «միջին ռիսկային» գոտում (տես **Պատկեր 4 (ա)**):

Ինստիտուցիոնալ ցուցանիշներն ընկալման հետ համատեղ դիտարկելիս նույնպես երկիրը հայտնվում է «միջին ռիսկային» գոտում, մինչդեռ միջավայրի և ընկալման ցուցանիշների համադրումը ցույց է տալիս, որ Հայաստանի գնումների համակարգը կանգնած է «բարձր ռիսկայնության» խնդրի առաջ (տես **Պատկեր 4 (բ)**):

Պատկեր 4 (ա)



Պատկեր 4 (բ)



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում բացահայտված հիմնական ռիսկային գործոնները՝ ՏՋԿ/ԹԻ-Հայաստանը ներկայացնում է մի շարք առաջարկություններ՝ ուղղված համապատասխան մարմիններին՝ բարձրացնելու գործողությունների թափանցիկությունը, կանխարգելելու և վերահսկելու կոռուպցիան: Դրանք ներառում են ինչպես միջավայրին վերաբերող ընդհանուր բնույթի առաջարկություններ, այնպես էլ զուտ գնումների ոլորտին առնչվող առաջարկություններ, որոնք անդրադառնում են շահերի բախմանը և գնումների գործընթացների թափանցիկությանը:

Ընդհանուր բնույթի միջոցառումներ

- Կառավարության կողմից (մասնավորապես՝ պլանների և ծրագրերի վերաբերյալ) ընդունվող որոշումների թափանցիկության ու հասարակության մասնակցության ապահովմանն ուղղված մեխանիզմների մշակում
- Բյուջետային գործընթացների վաղ փուլերում թափանցիկության ապահովմանն ուղղված մեխանիզմների մշակում
- Հանրային շահերի (մասնավորապես՝ հանրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման կապակցությամբ) պաշտպանությանն առնչվող արդարադատության մատչելիության ապահովմանն ուղղված իրավական հիմքերի մշակում
- Պետական պաշտոնյաների հարստանալու նկատմամբ պատշաճ վերահսկողության և պատասխանատվության ապահովմանն ուղղված մեխանիզմների մշակում:

Գնումների հետ կապված միջոցառումներ

- Գնումների մեկ՝ ընդհանուր համակարգի անցնելուն ուղղված միջոցների ձեռնարկում, հատկապես անդրադառնալով միջազգային պայմանագրերի շրջանակներում կատարվող գնումների թափանցիկությանը
- Գնումների գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների բացահայտում, պատճառների վերլուծություն և հնարավոր լուծումների ներկայացում
- Շահերի բախման իրավիճակները կանխարգելող միջոցների մշակում, ինչպես օրինակ՝
  - շահերի բախման հայտարարագրում և համապատասխան որոշումների ընդունման գործընթացներից խուսափում
  - մրցույթային հրավերները մշակող և հայտերը գնահատող աշխատակազմերի տարանջատում
  - մրցույթային հրավերների մշակման և հայտերի գնահատման գործընթացներում մասնակցություն ունեցած պետական ծառայողների հետ ենթակապալային հարաբերությունների արգելում
  - գնումներին առնչվող վարքագծի կանոնների խթանում և քաջալերում, ներառելով՝ պետական կառույցների համար կանոնակարգերի մշակումը և գնումների գործընթացների մասնակից ընկերությունների համար ոչ պարտադիր պահանջների առաջադրումը (օրինակ՝ ընկերությունը կարող է ներկայացնել իր վարքագծի կանոնները դրանց առկայության դեպքում)

- Գնումների վերաբերյալ հրապարակային տեղեկատվության ապահովում և տարածում, ներառելով
  - ինտերնետային կայքի վերաբերյալ տեղեկատվության տարածում բոլոր ՁԼՄ-ներով և պարբերական ճեպազրույցների կազմակերպում
  - ինտերնետային կայքում հետևյալ տեղեկությունների զետեղում և պարբերական թարմացում՝
    - գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտեր, այդ թվում՝ օրինակելի ձևեր
    - մրցույթային հայտերի մշակման և պայմանագրերի կատարման ուղեցույցեր
    - գնումների տարեկան/եռամսյակային պլաններ և դրանց կապը միջոցառումների պլանների ու ծրագրերի հետ
    - կապալառու կազմակերպությունների տվյալների բազա, ներառյալ դրանց համապատասխան փորձառությունը, կատարված պայմանագրերը, հիմնադիրների/տնօրենների կազմը, օրինազանց ընկերությունների և կիրառված պատժամիջոցների վերաբերյալ տեղեկությունները և այլն
    - հանրային գնումների տվյալների բազա, ներառյալ առնչվող պլանների և ծրագրերի հետ կապը, գնումների համար ընտրված մեթոդների հիմնավորումը, գնումների ընթացակարգերի արձանագրությունները, պայմանագրերի հիմնական տեղեկությունները, բողոքները և դրանց լուծումները, պայմանագրերի մեջ փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները, համապատասխան որոշումներն ու դրանց հիմնավորումները, մոնիտորինգի և վերահսկողության միջոցառումների արձանագրությունները և այլն
    - հանրային մասնակցության վերաբերյալ հնարավորությունները, այդ թվում՝ տեղեկատվության մատչելիությունը, բողոքների քննարկման և վերահսկման հանձնաժողովների մեջ ներգրավումը և այլն
- Միջոցների ձեռնարկում՝ արգելելու կողմնակալ վերաբերմունքը ընկերությունների նկատմամբ պետության կողմից տնօրինվող տվյալների մատչելիության ապահովման դեպքում, ինչպես օրինակ՝ երկրաբանական և սեյսմոլոգիական տվյալները, քարտեզները
- Մոնիտորինգի տեսանկյունից օգտակար վիճակագրական տվյալների ցուցակի մշակում, տվյալների հավաքում, վերլուծություն և արդյունքների հրապարակում (ինչպես օրինակ՝ հանրային գնումների քանակը և ընդհանուր գումարը, օգտագործված մեթոդների մասնաբաժինը, չկայացած, ընդհատված կամ փոփոխված պայմանագրերի մասին տվյալները, միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող պայմանագրերի մասնաբաժինը, բողոքները, դատավարության միջով անցած գործերը, համապատասխան վճիռները և այլն)
- Վերահսկողության և հաշվետվողականության ուժեղացում, մասնավորապես՝ կապված գնումների մեթոդների, կատարված ընտրության ու մերժումների հիմնավորումների հետ
- Հաղթողի վերաբերյալ որոշման հրապարակումից մինչև պայմանագրի կնքումը բավարար ժամանակահատվածի ապահովում՝ հնարավորություն ընձեռելու դժգոհ անձանց բողոքարկելու կայացված որոշումը
- Հայտերի մերժումների համար հստակ չափանիշների սահմանում՝ կանխարգելելու ոչ էական հիմքերով մերժումները և ապահովելու մրցակցությունը:

Հավելված Ա

Քաղվածք ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայից

Հոդված 9. Հանրային գնումներ և հանրային ֆինանսների կառավարում

1. Յուրաքանչյուր Կողմ, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր՝ ստեղծելու գնումների պատշաճ համակարգեր՝ հիմնված թափանցիկության, մրցակցության և որոշումների ընդունման օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք արդյունավետ են, այլ երևույթների շարքում, նաև կոռուպցիան կանխարգելելու հարցում: Նման համակարգերը, որոնց կիրառումը կարող է նկատի առնել համապատասխան շեմային արժեքներ, ապահովում են, ի թիվս այլոց,

ա. Գնումների ընթացակարգերին և պայմանագրերին առնչվող տեղեկությունների բաց տարածում, ներառյալ մրցույթների հրավերների մասին կամ պայմանագրերի շնորհմանն առնչվող կամ դրանց վերաբերյալ նշանակալի տեղեկատվությունը՝ բավականաչափ ժամանակ ընձեռելով մրցույթների հավանական մասնակիցներին նախապատրաստելու և ներկայացնելու իրենց հայտերը,

բ. նախապես մասնակցության պայմանների սահմանում, ներառյալ ընտրության և պայմանագրի շնորհման չափանիշներն ու մրցույթային կանոնները, ինչպես նաև դրանց հրապարակում,

գ. օբյեկտիվ և նախապես սահմանված չափանիշների կիրառում հանրային գնումներին առնչվող որոշումների ընդունման գործընթացում՝ խթանելու կանոնների կամ ընթացակարգերի ճիշտ կիրառման հետագա ստուգումը,

դ. տեղական վերահսկողության արդյունավետ համակարգի առկայության, ներառյալ բողոքարկման արդյունավետ համակարգը՝ ապահովելու իրավական մեխանիզմներ և լուծումներ այն դեպքերում, երբ սույն մասով սահմանվող կանոններն ու ընթացակարգերը չեն գործում,

ե. համապատասխան դեպքերում միջոցառումների ձեռնարկում՝ կարգավորելու գնումների համար պատասխանատու աշխատակազմին առնչվող հարցերը, ինչպիսիք են՝ որոշ հանրային գնումների ժամանակ շահերի հայտարարագրելը, կադրերի ընտրության ընթացակարգերը և վերապատրաստման պահանջները:

Հավելված Բ

Քաղվածքներ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. մարտի 31-ի թիվ 2004/18/EC «Հանրային աշխատանքների պայմանագրերի, հանրային մատակարարման պայմանագրերի և հանրային ծառայությունների մատուցման պայմանագրերի շնորհման ընթացակարգերի համակարգման մասին» դիրեկտիվից

Նախաբան

(2) Պայմանագրերի շնորհումը … ենթակա է [Եվրահամայնքի հիմնադրման վերաբերյալ] պայմանագրի սկզբունքների, մասնավորապես ապրանքների տեղաշարժի ազատության սկզբունքի, հիմնադրման ազատության սկզբունքի, ծառայությունների մատուցման ազատության սկզբունքի և դրանցից բխող սկզբունքների կիրառմանը, ինչպիսիք են հավասար վերաբերմունքի սկզբունքը, ոչ խտրական վերաբերմունքի սկզբունքը, փոխադարձ ճանաչման սկզբունքը, համամասնության սկզբունքը և թափանցիկության սկզբունքը …

(6) Սույն Հրահանգում ոչինչ չպետք է արգելի հանրային քաղաքականության, հանրային բարոյականության պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների կիրառմանը կամ գործադրմանը …

(29) Հանրային գնումներ իրականացնողների կազմած տեխնիկական նկարագրերը պետք է հնարավորություն տան, որ հանրային գնումները լինեն բաց մրցակցության համար…

(35) Հաշվի առնելով, որ տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների նոր զարգացումներն ու պարզեցումները կարող են ապահովել պայմանագրերի հրապարակայնությունը և գնումների գործընթացների արդյունավետությունն ու թափանցիկությունը, հաղորդակցության և տեղեկատվության փոխանակման ավանդական միջոցներին զուգահեռ պետք է կիրառվեն էլեկտրոնային միջոցները …

(36) Հանրային գնումների ոլորտում արդյունավետ մրցակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ անդամ երկրների գնումներ իրականացնող մարմինների կողմից գնումների վերաբերյալ ծանուցումները տարածվեն Համայնքի ողջ տարածքում ... Այդ առումով անհրաժեշտ է բարելավել հանրային ծանուցումների «տեսանելիությունը» համապատասխան գործիքների կիրառմամբ …

(43) Պետք է խուսափել հանրային պայմանագիր կնքելուց տնտեսվարող այնպիսի սուբյեկտների հետ, ովքեր մասնակցել են հանցագործությանը կամ մեղավոր ճանաչվել կոռուպցիայի կամ կեղծիքի (ի վնաս Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի) կամ փողերի լվացման մեջ ...

(46) Պայմանագրերը պետք է շնորհվեն օբյեկտիվ չափանիշների հիման վրա, որոնք կապահովեն համապատասխանություն թափանցիկության, ոչ խտրական և հավասար վերաբերմունքի սկզբունքներին և կտան երաշխիքներ առ այն, որ հայտերը գնահատվում են արդյունավետ մրցակցության պայմաններում ...

Հոդված 2. Պայմանագրեր կնքելու սկզբունքները

Գնումներ կատարող մարմինները պետք է հավասար և ոչ խտրական վերաբերմունք դրսևորեն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ և գործեն թափանցիկ կերպով…

Հավելված Գ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ «Հանրային պայմանագրերի նվազագույն ստանդարտներ»

Ստանդարտները նախատեսված են հանրային հատվածի համար և ընդգրկում են ծրագրերի ողջ ցիկլը, ներառյալ կարիքների գնահատումը, ծրագրի մշակումը, նախապատրաստական և բյուջետային գործունեությունը, նախքան գնման գործընթացը, բուն գնման գործընթացը և պայմանագրի կատարումը:

Ստանդարտները վերաբերում են հանրային կառավարմանն առնչվող բոլոր տիպի պայմանագրային հարաբերություններին, ներառյալ

- ապրանքների և ծառայությունների գնումները,
- մատակարարման, շինարարական և ծառայությունների մատուցման (այդ թվում ճարտարագիտական, ֆինանսական, տնտեսական, իրավաբանական և այլ խորհրդատվական) պայմանագրերի կնքումը,
- մասնավորեցումը, կոնցեսիաների և լիցենզիաների տրամադրումը,
- ենթակապալային գործընթացները և գործակալների ու համատեղ գործունեության համար գործընկերների ներգրավումը:

Հանրային գնումներ իրականացնող մարմինները պետք է

1. ընդունեն վարքագծի կանոններ, ինչը կպարտավորեցնի պայմանագիր կնքող մարմնին և դրա աշխատակիցներին հետամուտ լինել խիստ հակակոռուպցիոն քաղաքականությանը: Քաղաքականությունը պետք է հաշվի առնի շահերի հնարավոր բախումները, առաջարկի մեխանիզմներ կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ՝ ահազանգելու և ահազանգողներին պաշտպանելու համար,

2. թույլ տան, որ ընկերությունը հայտ ներկայացնի միայն այն դեպքում, եթե տվյալ ընկերությունն ունի վարքագծի կանոններ, որոնցով պարտավորեցնում է կազմակերպությանը և դրա աշխատակիցներին հետամուտ լինել խիստ հակակոռուպցիոն քաղաքականությանը,

3. պահեն կոռուպցիոն գործունեության մեջ ընկերությունների ներգրավվածությունը բավարար չափով փաստող «սև» ցուցակներ. որպես տարբերակ կարելի է ընդունել համապատասխան միջազգային կազմակերպության կողմից պատրաստված ցուցակները: Որոշակի ժամանակահատվածով զրկել «սև» ցուցակում ընդգրկված ընկերություններին՝ տվյալ մարմնի կողմից հայտարարվող մրցույթներին մասնակցելու հնարավորությունից,

4. ապահովեն, որ պետական մարմնի և նրա կապալառուների, մատակարարողների և ծառայություններ մատուցողների միջև կնքվող պայմանագրերի բոլոր կողմերը հետամուտ լինեն խիստ հակակոռուպցիոն քաղաքականությանը. սույն նպատակը կարելի է լավագույնս իրականացնել՝ պահանջելով, որ ծրագրի շրջանակներում, և' հայտերի ներկայացման, և' ծրագրի իրականացման փուլերում, կնքվի «օրինավորության» համաձայնագիր՝ պարտավորեցնելով, որ մրցույթներին մասնակցող ընկերությունները և պետական կառույցը ձեռնպահ մնան կաշառք տալուց և վերցնելուց,

5. ապահովեն, որ ցածր շեմից բարձր պայմանագրերը ենթակա լինեն բաց մրցակցային կարգով գնման. բացառությունները պետք է լինեն սահմանափակ և հստակ հիմնավորված,

6. բոլոր մասնակիցների, և գերադասելի է՝ նաև լայն հանրության համար, ապահովեն տեղեկատվության դյուրին մատչելիություն հետևյալի մասին.

- մինչև գնման բուն գործընթացն իրականացված գործողություններ,
- մրցույթին մասնակցելու հնարավորություններ,
- ընտրության չափանիշներ,
- գնահատման գործընթաց,
- պայմանագրի շնորհման (հաղթող մասնակցի) մասին որոշում և դրա հիմնավորում,
- պայմանագրի ժամկետներ, պայմաններ և փոփոխություններ,
- պայմանագրի իրականացում,
- միջնորդների և գործակալների դերակատարում,
- վեճերի լուծման մեխանիզմներ և ընթացակարգեր:

Գաղտնիությունը պետք է սահմանափակվի միայն օրենքով սահմանված տեղեկատվության համար: Ուղղակի գնումների կամ սահմանափակ մրցույթների գործընթացների մասին համարժեք տեղեկությունները նույնպես պետք է մատչելի լինեն հանրության համար,

7. ապահովեն, որ հայտ ներկայացրած ոչ մի ընկերության համար գնման գործընթացի ոչ մի փուլում մատչելի չդարձվի առավելություն ընձեռող որևէ տեղեկություն՝ հատկապես ընտրության գործընթացին առնչվող տվյալները,

8. մասնակիցներին տրամադրեն բավարար ժամանակ հայտի պատրաստման և նախաորակավորման պահանջների կատարման համար, եթե դրանք կիրառելի են, հատկացնեն ողջամիտ ժամկետ պայմանագիր շնորհելու վերաբերյալ որոշման հրապարակման և պայմանագիրը կնքելու միջև, որպեսզի դժգոհ մրցակցին հնարավորություն տրվի բողոքարկել կայացված որոշումը.

9. ապահովեն, որ պայմանագրի գնի կամ աշխատանքի նկարագրի մեջ ընդհանուր շեմից (օրինակ՝ պայմանագրի արժեքի 15 տոկոս) ավելի մեծ փոփոխություններ ակնկալող որոշումների նկատմամբ իրականացվի բարձր մակարդակի մոնիտորինգ՝ գերադասելի է այն մարմնի կողմից, որն ընդունել է պայմանագրի շնորհման վերաբերյալ որոշումը,

10. ապահովեն, որ ներքին ու արտաքին հսկողությունը և աուդիտի մարմիններն անկախ լինեն և արդյունավետ գործեն, և որ նրանց զեկույցները հանրության համար մատչելի լինեն. ծրագրի իրականացման խնդրում որևէ չհիմնավորված հետաձգում պետք է հիմք հանդիսանա լրացուցիչ ստուգման համար,

11. տարանջատեն հիմնական գործառույթները՝ ապահովելու, որ ծրագրի պահանջարկի գնահատման, նախապատրաստման, ընտրության, պայմանագրի կնքման, հսկողության և վերահսկողության պատասխանատվությունը դրվի առանձին մարմինների վրա,

12. ապահովեն ստանդարտ գրասենյակային երաշխիքներ, ինչպես, օրինակ՝ որոշումներ ընդունող հանձնաժողովների կազմում և խոցելի պաշտոններում գտնվող աշխատակազմի հերթագայություն (ռոտացիա). գնման գործընթացի համար պատասխանատու աշխատակազմը պետք է լինի լավ վերապատրաստված և պատշաճ վարձատրվող,

13. նպաստեն, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությանը որպես անկախ մոնիտորներ՝ ինչպե'ս հայտի ներկայացման, այնպե'ս էլ ծրագրերի իրականացման փուլերում:

Հավելված Դ

Հանրային գնումների համաշխարհային ծրագիր

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
I. Հանրային ծախսերի պլանավորում					
1	Պահանջո՞ւմ է արդյոք օրենսդրությունը հանրային գնումները կապել պլանների, ծրագրերի և բյուջեի հետ:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.15, մաս 1 և 5
2	Պարտադի՞ր է արդյոք, որ բյուջեն հաստատվի նախքան գնումների գործընթացը սկսելը:	A		x	«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.15, մաս 4
3	Պարտավո՞ր են արդյոք պետական կառույցները մշակել գնումների տարեկան ծրագիր:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.15, մաս 1
4	Գոյություն ունե՞ն արդյոք քաղաքացիական հասարակության մասնակցության իրավական մեխանիզմներ բյուջեի մշակման և գերակայությունների սահմանման գործընթացում:	C		x	
5	Գոյություն ունե՞ն արդյոք քաղաքացիական հասարակության մասնակցության իրավական մեխանիզմներ պլանների ու ծրագրերի մշակման և գերակայությունների սահմանման գործընթացում:	A		x	
6	Իրավական կարգավորում ունի՞ արդյոք պլաններում, ծրագրերում և բյուջեում որոշակի միջոցառումներ ընդգրկելու եւ դուրս թողնելու նպատակով իրականացվող խորհրդարանական լոբբինգը:	A		x	
	Ռիսկի տոկոս	**66.67**			
II. Օբյեկտիվ ընտրության մեխանիզմներ					
7	Գոյություն ունե՞ն արդյոք գնումների մասին մեկից ավելի օրենքներ: (Այո=1)	A		x	
8	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը բաց մրցույթը որպես ընդհանուր նորմ:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.17, մաս 5

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
9	Կարգավորո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը օրենքի կիրառման բացառությունները:	C	x		ՀՀ սահմանադրություն, հոդ. 6 և «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 4, մաս 2 «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 3, մաս 2
10	Կարգավորո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը բաց մրցույթի մեթոդի բացառությունները:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.19-23 և 44 ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 7-ի «Փակ մրցույթով գնումների իրականացման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. դեկտեմբերի 27-ի N1267 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N1755-Ն որոշում ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի «Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր հնարավոր մասնակիցների որոշման կարգը հաստատելու մասին» N2274-Ն որոշում
11	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը բաց մրցույթի մեթոդի այնպիսի բացառություններ, որոնք պայմանավորված չեն արտակարգ իրավիճակներով, միայն մեկ մատակարարի առկայությամբ կամ ազգային անվտանգության հարցերով: (Այո=1)	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 20-23 և 44
12	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հատուկ ընթացակարգեր ուղղակի գնումների համար:	A	x		ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2005թ. ապրիլի 25-ի «Մեկ անձից գնումներ կատարելու հիմքերը և (կամ) փաստաթղթերը սահմանելու մասին» N426-Ն հրաման
13	Ապահովո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի յուրաքանչյուր պետական կառույց նշանակի գնումների գործընթացի համար պատասխանատու որոշակի ստորաբաժանում կամ պաշտոնյա:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.16, մաս 4
14	Ամրագրո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը չափանիշներ մրցույթային փաստաթղթերում գնումների պայմանները սահմանելու համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 27 ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 23-ի «Գնումների գործընթացի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու մասին» N1690-Ն որոշում

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
15	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը ձևաչափերի կամ տիպային փաստաթղթերի (օրինակելի ձևերի) կիրառություն գնումների գործընթացի համար:	C	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 8, մաս 2 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. հունվարի 17-ի «Մրցույթի հայտերի գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N16 հրաման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. փետրվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվող տեղեկությունների ցանկը և օրինակելի ձևերը հաստատելու մասին» N43 հրաման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003թ. սեպտեմբերի 8-ի «Գնման ընթացակարգը և պայմանագիրը՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու հանգամանքը հավաստող եզրակացության ձևը հաստատելու մասին» N 714-Ն հրաման և այլն
16	Ապահովո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մրցույթային փաթեթում սահմանվի հստակ վերջնաժամկետ հայտերի ներկայացման համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 27
17	Հնարավորություն տալի՞ս է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մրցույթային փաթեթում փոփոխություններ մտցվեն մասնակիցների առաջարկությամբ:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 28, մաս 2 և հոդ. 39, մաս 4
18	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մրցույթային փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները տրվեն հանրային հանդիպումների (բաց նիստեր, որոնց կարող է մասնակցել ցանկացած շահագրգիռ կողմ) ժամանակ:	A		x	
19	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որ բոլոր մասնակիցները գրավոր տեղեկացվեն մրցույթային փաստաթղթերում կատարվող փոփոխությունների մասին:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 28, մաս 2

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
20	Հատուկ կարգավորո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը առաջարկի լրջության երաշխիքները (մրցույթի հայտի ապահովում):	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 31
21	Պարունակո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հատուկ դրույթներ հայտերը գնահատելու համար պատասխանատու աշխատակազմի մասնագիտական փորձառության վերաբերյալ:	B	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ», կետ 3
22	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հանձնաժողովների կազմավորում հայտերը գնահատելու համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 32 ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ», կետ 3 և 5
23	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը կանոններ հայտերի գնահատման չափանիշների «կշիռները» համեմատելու համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 34, մաս 5 «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 43, մաս 1 և 2
24	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հանրային գնումների համար մասնակիցների գրանցամատյանի (ազգային մասշտաբով մատակարարների մատյան) առկայություն:	B		x	
25	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հաստատված գնացուցակների կիրառություն որոշակի դեպքերում հայտերի միջև ընտրություն կատարելու համար:	B		x	
26	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը գնումների առարկա հանդիսացող ապրանքների և ծառայությունների տեխնիկական նորմերի, մետրոլոգիական չափորոշիչների կամ արդիականացված չափանիշների կիրառություն:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.13
27	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի հաղթող մասնակցին ընտրելու համար պատասխանատու պետական ծառայողներն ունենան որոշակի որակավորում:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ», կետ 3

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
28	Հնարավորություն տալի՞ս է արդյոք գնումների մասին օրենսդրությունը որոշում ընդունելու՝ շեղվելով գնահատող հանձնաժողովի կողմից տրված առաջարկներից: (Այո=1)	B		x	
29	Ներառո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը չափանիշներ պայմանագիր շնորհելու կամ չշնորհելու մասին որոշում ընդունելու (այսինքն՝ առանց պայմանագրի շնորհման մրցույթը փակված հայտարարելու) համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 38, մաս 1
	Ռիսկի տոկոս	**16.67**			

III. Պայմանագրի իրականացում և կատարում

30	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պայմանագրի իրականացման երաշխիքներ (պայմանագրի կատարման ապահովում):	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 36
31	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պայմանագրի իրականացման երաշխիքների ստանդարտ մոդելների կիրառություն:	C		x	
32	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը բյուջեի վերանայում կամ համապատասխանեցում (օրինակ՝ բյուջեի սահմանափակումներից ելնելով), ինչը կարող է ազդել պայմանագրի կատարման վրա: (Այո=1)	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ.15, մաս 3 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի 2006թ. մարտի 21-ի «ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով հաստատված հատկացումների գումարների՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների վերաբաշխումների, ինչպես նաև բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում, բյուջետային հատկացումների վերաբաշխումներով չպայմանավորված, փոփոխությունների և լրացումների իրականացման կարգը սահմանելու մասին» N290-Ն հրաման

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
33	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը չափանիշներ և սահմանափակումներ կնքված և ընթացիկ պայմանագրերում փոփոխություն կատարելու կապակցությամբ:	A	x		ՀՀ կառավարության N1690-Ն որոշում, կետ 2 (դ)
34	Սահմանո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը այն գործոնները, որոնք կարող են հանգեցնել կատարվող պայմանագրերի գործողության վաղաժամկետ դադարեցմանը:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգ», կետ 18
35	Պարունակո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը ընդհանուր պահանջներ պայմանագրում նշված ժամանակացույցով կատարվելիք վճարումների ժամկետների և պայմանների վերաբերյալ:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 36, մաս 4 ՀՀ կառավարության N 1267 որոշում՝ «Գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգ», կետ 3 (բ), (գ), (դ), 18 և 22-29 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. դեկտեմբերի 17-ի «Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի, պայմանագրից քաղվածքի օրինակելի ձևերը և դրանց լրացման պահանջները հաստատելու մասին» N855-Ն հրաման
	Ռիսկի տոկոս	**21.43**			

IV. Գնումների նկատմամբ հսկողություն

36	Հստակորեն սահմանո՞ւմ է արդյոք օրենսդրությունը, թե պետական վերահսկողության որ մարմիններն են պատասխանատու հանրային գնումների ոլորտի գործունեության արտաքին վերահսկողության համար:	A	x		«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենք
37	Կա՞ն արդյոք հատուկ ստորաբաժանումներ պետական վերահսկողական մարմիններում հանրային գնումների արտաքին վերահսկողություն իրականացնելու համար:	B		x	

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
38	Կա՞ն արդյոք իրավական դրույթներ, որոնք պետական մարմինների (դրանց գրասենյակների և գործընթացների) նկատմամբ սահմանում են ներքին հսկողության մեխանիզմներ:	A	x		«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. դեկտեմբերի 30-ի «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը հաստատելու մասին» N934-Ն հրաման
39	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը գնումների գործընթացի ներքին վերահսկողություն այդ մարմինների կողմից:	A	x		ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. դեկտեմբերի 30-ի «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը հաստատելու մասին» N934-Ն հրաման
40	Կա՞ արդյոք օրենքով սահմանված պարտավորություն՝ ապահովելու գնումներին առնչվող որոշումների նկատմամբ ներքին վերահսկողությունը:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթների հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ», կետ 12
41	Կա՞ արդյոք օրենքով սահմանված պարտավորություն՝ ապահովելու գնումներին առնչվող որոշումների նկատմամբ արտաքին վերահսկողությունը:	A	x		«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենք
42	Կարգավորո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը հսկողության մեխանիզմներ այն գնումների համար, որոնք կատարվել են ոչ բաց մրցույթի մեթոդով:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9, մաս 1-2 ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգ», կետ 16 և «Գնումների ընթացակարգերի արձանագրությունների ստուգման կարգ»
43	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի ոչ բաց մրցույթով իրականացված գնումների նկատմամբ կիրառվեն հաշվետվողականության մեխանիզմներ:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9, մաս 1-3
44	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը ստեղծելու գնումների գործընթացների ընդհանուր մոնիտորինգի համակարգ:	A	x		ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. նոյեմբերի 29-ի «Գնման գործընթացների մոնիտորինգի կատարման վերաբերյալ» N435 հրաման

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
45	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի գնումներ իրականացնող կառույցներն ունենան ընթացակարգեր՝ հսկելու ապրանքների և ծառայությունների մատակարարումը, ներառյալ քանակը, որակն ու ժամանակացույցը:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում, «Գնումների բնութագրի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգ», կետ 5 և17 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. դեկտեմբերի 4-ի «Պայմանագրի կատարման մասին եզրակացության» ձևը հաստատելու մասին» N295 հրաման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003թ. հոկտեմբերի 14-ի «Հանձնման-ընդունման արձանագրության ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին» N786-Ն հրաման
46	Գոյություն ունե՞ն արդյոք իրավական մեխանիզմներ, որոնք քաղաքացիական հասարակությանը հնարավորություն են ընձեռում մոնիտորինգի ենթարկել ընտրության գործընթացը:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9, մաս 4, հոդ. 11 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. փետրվարի 9-ի N43 հրաման
47	Գոյություն ունե՞ն արդյոք իրավական մեխանիզմներ, որոնք քաղաքացիական հասարակությանը հնարավորություն են ընձեռում մոնիտորինգի ենթարկել պայմանագրերի իրականացման գործընթացը:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 16, մաս 3
48	Հնարավորություն տալի՞ս են արդյոք իրավական մեխանիզմները, որպեսզի քաղաքացիական հասարակությունը վերահսկողական մարմիններին բողոքարկի անօրինականությունները և կոռուպցիոն դրսևորումները:	B	x		ՀՀ քրեական օրենսգիրք «Վարչարարության հիմունքների և վարչարարության մասին» ՀՀ օրենք
49	Հնարավորություն տալի՞ս է արդյոք օրենսդրությունը, որպեսզի քաղաքացիական հասարակությունը մոնիտորինգի ենթարկի վերահսկողական մարմինների կողմից իրականացվող՝ գնումներին առնչվող գործընթացների արտաքին ստուգումները:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 16, մաս 3
50	Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը գնումների արտաքին վերահսկողության նկատմամբ քաղաքական վերահսկողական մեխանիզմներ (օր.՝ խորհրդարանի միջոցով):	B	x		ՀՀ սահմանադրություն, հոդ. 77 «Ազգային ժողովի կանոնակարգի մասին» ՀՀ օրենք, հոդ. 86

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
51	Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը պետական (վարչական) հատուկ գրասենյակ կամ մարմին՝ գնումների ոլորտի կոռուպցիոն դրսևորումները քննելու և դրանց դեմ պայքարելու համար:	B		x	
52	Մշակվե՞լ են արդյոք քաղաքացիական ծառայության համար էթիկայի կանոններ կամ նման այլ ակտեր:	B	x		ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. մայիսի 31-ի «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին» N13 որոշում
53	Ստեղծվա՞ծ է արդյոք հատուկ համակարգ՝ կանխարգելելու շահերի բախումը հանրային գնումների գործընթացում:	A		x	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդ. 24, մաս 1 (ա), (բ), (գ)
54	Հստակորեն կարգավորո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենքը շահերի բախման իրավիճակները մրցույթային հրավերի մշակման համար պատասխանատու աշխատակազմի համար:	A		x	
55	Ապահովո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մրցույթային հայտերը գնահատող աշխատակազմը տարբեր լինի մրցույթային հրավերը մշակող աշխատակազմից:	A		x	
56	Սահմանվա՞ծ են արդյոք հստակ դրույթներ մրցույթային հայտերը գնահատող անձանց շահերի բախման դեպքերի վերաբերյալ:	A		x	
57	Սահմանափակո՞ւմ է արդյոք օրենսդրությունը այն անձանց/ընկերությունների մասնակցությունը մրցույթներին, որոնք (կամ՝ նրանց ընտանիքի անդամները) ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավված են եղել մրցույթային փաթեթների մշակմանը:	A		x	
58	Կա՞ արդյոք դրույթ, որն արգելում է մրցույթի գնահատման գործընթացին մասնակցած պետական պաշտոնյաներին հետագայում պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել մրցույթում հաղթած անձանց/ընկերությունների հետ:	A		x	

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
59	Պարտավո՞ր են արդյոք պետական պաշտոնյաները պարբերաբար հայտարարագրել իրենց ունեցվածքն ու եկամուտները ինչպես պետական ծառայողի պաշտոն ստանձնելիս, այնպես էլ պաշտոնաթողումից հետո:	A	x		«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք
60	Հատուկ կարգավորման առարկա՞ է արդյոք պաշտոնավարման ընթացքում ոչ օրինական ճանապարհով հարստանալու երևույթը:	A		x	
61	Որակավորվո՞ւմ են արդյոք հանրային ռեսուրսների համար վնասակար գործողությունները (գնումների գործընթացում) որպես քրեական հանցանք:	A	x		ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 22 և 29
62	Որակավորվո՞ւմ են արդյոք գնումների ոլորտում պետական ծառայության դեմ ուղղված քրեական հանցանքները որպես թեթև հանցագործություն (որի համար չի նախատեսվում ազատազրկում կամ որը ենթակա է փոքր չափի տուգանքի): (Այո=1)	A		x	ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 29
63	Սահմանվա՞ծ են արդյոք տուգանքներ կամ տնտեսական պատժամիջոցներ գնումների ոլորտում պետական ծառայության կանոնները խախտելու համար:	A	x		ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 29 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
64	Նախատեսվա՞ծ են արդյոք վարչական պատժամիջոցներ (օրինակ՝ պետական ծառայողի որևէ պաշտոն ստանձնելու արգելք) գնումների ոլորտում պետական ծառայության կանոնները խախտելու համար:	A	x		ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 29
65	Նախատեսվա՞ծ են արդյոք դրույթներ քրեական օրենսդրությունում գնումների հայտերի ներկայացման փուլում գաղտնի համաձայնեցված գործողությունների վերաբերյալ:	A	x		ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 22, հոդ. 195
66	Արգելո՞ւմ է արդյոք օրենսդրությունը հայտերի ներկայացման փուլում նախապես գաղտնի համաձայնեցված գործողությունները:	A	x		«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդ. 36

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
67	Տալի՞ս է արդյոք օրենսդրությունը հնարավորություն, որպեսզի գնումներ իրականացնող մարմնի որոշումները մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոքարկվեն դատարանում:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 56
68	Պարտադի՞ր են արդյոք դատական մարմնի որոշումները գնումներ իրականացնող մարմնի համար:	A	x		«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք
69	Սահմանափակվո՞ւմ են արդյոք դատարանի որոշումները վնասների փոխհատուցմամբ:	B		x	ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 22 և 29
70	Տալի՞ս է արդյոք օրենսդրությունը հնարավորություն, որպեսզի առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկեն ավելի բարձր ատյանի դատական մարմնում:	A	x		«Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք
71	Պարտադի՞ր են արդյոք վերաքննիչ/վճռաբեկ դատարանի որոշումները գնումներ իրականացնող մարմնի համար:	A	x		ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք
72	Սահմանափակվո՞ւմ են արդյոք վերաքննիչ/վճռաբեկ դատարանի որոշումները վնասների փոխհատուցմամբ:	B		x	ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 22 և 29
	Ռիսկի տոկոս	**24.51**			

V. Տեղեկատվության մատչելիություն

73	Սահմանո՞ւմ է արդյոք օրենսդրությունը պարտավորություն՝ հրապարակելու պետական պլանները, ծրագրերը և բյուջեները:	A	x		«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդ. 26
74	Նախատեսո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը մրցույթային փաստաթղթերի անսահմանափակ տարածում գնումների բոլոր գործընթացներում:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 11
75	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը մրցույթների հրավերների հրապարակում ՁԼՄ-ներով:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 25, մաս 1 ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ», կետ 16 ՀՀ կառավարության N1690-Ն որոշում, կետ 1

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
76	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը մրցույթների հրավերների հրապարակում էլեկտրոնային լրատվամիջոցներով:	C		x	
77	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը մրցույթային փաստաթղթերի հրապարակում էլեկտրոնային լրատվամիջոցներով:	C		x	
78	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը մրցույթների գնահատման և ընտրության մասին բաց գրառումների կամ գրանցամատյանների առկայություն:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9
79	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պայմանագրի կնքման մասին որոշման (հաղթող մասնակցի անվան) հրապարակում:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 11 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. փետրվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվող տեղեկությունների ցանկը և օրինակելի ձևերը հաստատելու մասին» N43 հրաման
80	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մրցույթային հայտերի բացումն ու մրցույթների ամփոփումը ենթակա լինեն հանրային լսումների:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Մրցույթի հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգ»
81	Կա՞ն արդյոք իրավական մեխանիզմներ, որոնք նպաստում են քաղաքացիական հասարակության տեղեկատվության մատչելիությանը մրցույթների գործընթացների վերաբերյալ:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդ. 6
82	Պարտավո՞ր են արդյոք պետական կառույցները վարել գրանցամատյաններ կայացված մրցույթների վերաբերյալ:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 29, կետ. 4 ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գնումների գործակալության գործունեության կարգ», հոդ. 15 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001թ. հունվարի 17-ի N16 հրաման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. մայիսի 6-ի N358 հրաման

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
83	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը վարելու գրանցամատյաններ և վիճակագրություն բաց մրցույթի բացառություն հանդիսացող գնումների համար:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9
84	Հրապարակային փաստաթղթե՞ր են արդյոք բաց մրցույթի բացառություն հանդիսացող գնումների վերաբերյալ վարվող գրանցամատյաններն ու վիճակագրությունը:	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 9
85	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պայմանագրի իրականացման ժամանակացույցի հրապարակում:	B		x	
86	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը ընթացիկ պայմանագրերի առարկայի, ժամանակացույցի կամ բյուջեի ճշգրտումների և կամ փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների հրապարակում:	B		x	
87	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը ընթացիկ պայմանագրերում կատարվող ճշգրտումների և փոփոխությունների հրապարակում:	B		x	
88	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պահելու գրառումներ և թղթապանակներ պայմանագրերի կատարման և վերահսկողական գործընթացների վերաբերյալ:	A	x		ՀՀ կառավարության N1267 որոշում՝ «Գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգ»
89	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը պայմանագրերի կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների հրապարակում:	A	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 16, մաս 2 (ժ)
90	Պահանջո՞ւմ է արդյոք գնումների մասին օրենսդրությունը, որպեսզի մասնակիցների կողմից իրականացված պայմանագրերի, նրանց ներկայացված տուգանքների և պատժամիջոցների մասին տվյալները մուտքագրվեն մասնակիցների/հայտատուների գրանցամատյանում:	B		x	

	Ցուցանիշ	Ռիսկի աստիճան	Այո	Ոչ	Հղում
91	Պահանջո՞ւմ է արդյոք օրենսդրությունը հրապարակելու այն կապալառուների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվել են պատժամիջոցներ պայմանագրերն անհարգելի պատճառով չիրականացնելու համար («սև» ցուցակներ):	B	x		«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդ. 5, մաս 6 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2005թ. նոյեմբերի 2-ի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկը հաստատելու մասին» N1166 հրաման
92	Պարտավո՞ր են արդյոք վերահսկողական մարմինները ԶԼՄ-ներով հրապարակելու գնումների ոլորտում կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ իրականացվող քննության արդյունքները:	B		x	
	Ռիսկի տոկոս	**25.00**			
	Ռիսկի միջինացված տոկոս	**30.85**			

© Թրանսպարենսի Ինթերնեշնլ

Հավելված Ե

Հանրային գնումների համաշխարհային ծրագիր

ԸՆԿԱԼՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Ցուցանիշ	Այո	Ոչ	Հիմնավորում
1	Կարո՞ղ են արդյոք օրենքում ամրագրված դրույթները չարաշահվել այնպես, որ բաց մրցույթը չկիրառվի որպես գնումներ իրականացնելու հիմնական մեթոդ:	x		Հնարավոր է այնպես կիրառել դրույթները, որպեսզի առավել համապատասխան համարվի մեկ անձից գնման մեթոդը: Սակայն, իրական պրակտիկան ցույց է տալիս, որ կենտրոնական մակարդակում բաց մրցույթներով իրականացվող գնումների բաժինը աճել է (Համաշխարհային բանկի տվյալներով 2001թ. այն կազմել է 20%, իսկ 2006թ.՝ 90%): Բացատրություններից մեկն այն է, որ օրենքը սկսում է ավելի լավ գործել և պետական կառույցների կողմից իրականացվող պլանավորման գործընթացները աստիճանաբար բարելավվում են: Մեկ այլ կարծիքի համաձայն, բաց, թեև կեղծ, մրցույթների անցկացումը հարցականի տակ չի դնում գնման «մաքրությունը», գնի հիմնավորվածությունն ու հաղթողի անունը, և դրանով իսկ ավելի լավ է քողարկում կոռուպցիոն դրսևորումները:
2	Եթե կա մեկից ավել օրենք գնումների մասին, կա՞ն արդյոք դրանց միջև հակասություններ, կամ հնարավո՞ր է արդյոք սեփական հայեցողությամբ որոշել, թե որ օրենքը պետք է կիրառվի:		x	Կա միայն մեկ օրենք: Այն կարգավորում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, առևտրային և պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունցող կազմակեությունների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացները: Այն չի վերաբերում միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող գնումներին, եթե դրանցով նախատեսված են գնումների կատարման այլ նորմեր:
3	Հիմնավորվա՞ծ են արդյոք բաց մրցույթի բացառությունները:	x		Բացառությունները ընդհանուր առմամբ համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և մշակվել են Համաշխարհային Բանկի կողմից պատրաստված «Երկրի գնումների գնահատման զեկույցի» առաջարկությունների հիման վրա:
4	Չարաշահվո՞ւմ են արդյոք բաց մրցույթի բացառությունները:	x		Մեկ անձից գնումները չարաշահվում են կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտներում:
5	Կիրառվո՞ւմ են արդյոք բաց մրցույթի բացառությունները համապատասխանորեն:	x		Ընդհանուր առմամբ, գնումների մեթոդները կիրառվում են համապատասխանորեն:

	Ցուցանիշ	Այո	Ոչ	Հիմնավորում
6	Թափանցի՞կ են արդյոք այն հիմքերը, որոնք վերաբերում են գնումների այս կամ այն մեթոդի ընտրությանը (օրինակ՝ մրցույթ կամ մեկ անձից գնում)	x		Գնումների ընթացակարգերի արձանագրությունները ներառում են գնման մեթոդը և դրա ընտրության հիմքերը: Այս փաստաթղթերը բաց են և պետք է տրամադրվեն հետաքրքրվող անձանց/ կազմակերպություններին նրանց կողմից նման պահանջ ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:
7	Ունի՞ արդյոք փորձառություն գնման առարկայի ոլորտում հայտերը գնահատելու գործում ներգրավված աշխատակազմը:		x	Գնահատումն իրականացվում է հանձնաժողովների կողմից, որոնց անդամները պետք է ունենան գնման առարկան գնահատելու մասնագիտական կարողություն, սակայն որոշ դեպքերում զգացվում է մասնագետների որակավորման պակաս:
8	Առկա՞ են արդյոք մրցույթների գաղտնիության դրույթների չարաշահումներ գնումների գործընթացներում:		x	Նման տվյալներ առկա չեն:
9	Չարաշահվո՞ւմ է արդյոք պայմանագիրը ժամկետից շուտ ընդհատելու հնարավորությունը կոռուպցիոն գործարքների նպատակով:		x	Նման տվյալներ առկա չեն:
10	Հստակորեն կարգավորվո՞ւմ են արդյոք շահերի բախման երևույթները մրցույթային փաստաթղթերի պատրաստման ժամանակ, և կիրառվո՞ւմ են դրանք արդյոք համապատասխան կերպով:		x	Գնումների ոլորտում շահերի բախումը չի կարգավորվում՝ հիմք ընդունելով այն, որ քաղաքացիական ծառայողների շրջանում այդ երևույթը մասամբ կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ և դա համարվում է բավարար:
11	Կա՞ն արդյոք հստակ սահմանափակումներ այն անհատների համար, որոնք մասնակցել են գնման առարկայի հետ կապված նախկին ուսումնասիրություններին և մրցույթային հրավերի մշակմանը: Եթե այո, պահպանվո՞ւմ են արդյոք այդ սահմանափակումները:		x	Նման սահմանափակումներ առկա չեն:
12	Տարբերվո՞ւմ է արդյոք հայտերը գնահատող աշխատակազմը մրցույթային հրավերը մշակողից:		x	Նման սահմանափակումներ առկա չեն:

	Ցուցանիշ	Այո	Ոչ	Հիմնավորում
13	Լինո՞ւմ են արդյոք շահերի բախման դեպքեր մրցույթային առաջարկների գնահատման փուլում:	x		Նման փաստեր առկա չեն: Այնուամենայնիվ, այն փաստը, որ շահերի բախումը սահմանափակվում է միայն քաղաքացիական ծառայողների այլ աշխատանք կատարելու շրջանակներով, թույլ է տալիս ենթադրել, որ հնարավոր են շահերի բախման դեպքեր:
14	Վերահսկվո՞ւմ է արդյոք պատշաճ կերպով պայմանագրերի իրականացումն այն դեպքերում, երբ վերահսկողությունը գտնվում է պետական պաշտոնյաների իրավասության շրջանակում:		x	Վերահսկողության որակի մասին չկան կոնկրետ տվյալներ:
15	Բարձր որակի՞ է արդյոք պայմանագրերի իրականացման նկատմամբ վերահսկողությունը, երբ իրականացվում է արտաքին կազմակերպության կողմից:		x	Վերահսկողության որակի մասին չկան կոնկրետ տվյալներ:
16	Նպաստե՞լ է արդյոք վերահսկող մարմինների աշխատանքը, որպեսզի համապատասխան և ճշգրիտ կերպով բացահայտվեն գնումների գործընթացում առկա կոռուպցիոն դրսևորումները:		x	Կոռուպցիոն դեպքերի բացահայտման մասին չկան կոնկրետ տվյալներ:
17	Գործո՞ւմ են արդյոք պատշաճ կերպով գնման գործընթացում ծագող վեճերը և հիմնահարցերը լուծելու նպատակով ստեղծված վարչական հաստատությունները:	x		Վեճերի և խնդիրների լուծման առաջին ատյանը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Գնումների գործընթացի կարգավորման և բյուջետային գործընթացի մեթոդաբանության վարչությունն է, որը պատշաճ կերպով կատարում է իր դերը և ղեկավարում պրակտիկայի բարելավման գործընթացը: Այնուամենայնիվ, կա քննադատություն, որ այս կառույցի հնարավորությունները օբյեկտիվ դատողությունների և անկախ որոշումներ ընդունելու առումով կարող են լինել սահմանափակ, քանի որ այն, ինչպես և «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ը, որը կազմակերպում է գնումների գործընթացները, գտնվում են նույն մարմնի՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ենթակայության տակ:
18	Գործո՞ւմ է արդյոք պատշաճ կերպով դատական համակարգը (սահմանված են ողջամիտ ծախսեր և ժամկետներ) գնումների ընթացքում և դրանց հետ կապված վեճերը լուծելու հարցում:		x	Չնայած, որ չկան հատուկ փաստեր գնումների հետ կապված գործերի առնչությամբ դատական պրակտիկայի վերաբերյալ, համակարգն ինքը համարվում է ոչ արդյունավետ և կոռումպացված:

	Ցուցանիշ	Այո	Ոչ	Հիմնավորում
19	Պատշաճ կերպո՞վ են արդյոք գործում այն իրավական մեխանիզմները, որոնք կոչված են ապահովելու հասարակության մասնակցությունը գնումների գործընթացներին:		x	Չնայած այն բանին, որ գնումների մասին օրենսդրությունն ապահովում է գնումների ոլորտի մոնիտորինգ իրականացնելու նպատակով հասարակական կազմակերպությունների մասնակցության մի շարք իրավական լծակներ, դրանք պատշաճ կերպով չեն կիրառվում հետաքրքրվածության բացակայության կամ հարցը լիարժեք չհասկանալու պատճառով: Բացի այդ, չկա հնարավորություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար դիմելու դատարան հանրային շահի ոտնահարման կապակցությամբ, քանի որ դիմողը նման դեպքում կհամարվի ոչ պատշաճ հայցվոր:
20	Բարձր որակո՞վ են արդյոք վարվում բաց մրցույթների բացառություն հանդիսացող մեթոդներով կատարվող գնումների պայմանագրերի գրանցամատյաններն ու վիճակագրական տվյալները:	x		Բոլոր մեթոդներով կատարվող գնումների վերաբերյալ գրանցամատյաններն ու վիճակագրությունը նույն որակի են, ինչպես որ բաց մրցույթի համար:
21	Պատշա՞ճ և լիարժե՞ք է արդյոք մրցույթների հրավերների որակը:	x		Դրանք համարվում են համապատասխան որակի և լիարժեք կազմված: Այնուամենայնիվ, երկիրն ընդունել է էլեկտրոնային գնումների զարգացման ռազմավարություն, որի իրականացման արդյունքում էլ ավելի կբարելավվեն տեղեկատվության որակը և հրապարակայնությունը:
22	Առկա՞ է արդյոք պատշաճ (և ժամանակին) տեղեկատվություն գնումների պայմանագրերի կնքման մասին:		x	Կնքված պայմանագրերի մասին տվյալները տպագրվում են ՀՀ ՖԷՆ «Գնումների պաշտոնական տեղեկագրում», որը լույս է տեսնում և տեղադրվում ինտերնետային կայքում մոտավորապես 1-2 ամիսը մեկ անգամ: Որոշ գնումների վերաբերյալ տեղեկություն լինում է ժամանակին, որոշներինը՝ ուշացած: Էլեկտրոնային լրատվամիջոցների կիրառումը կբարելավի տեղեկատվության որակն ու տարածումը:
23	Գնումների պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները ներառո՞ւմ են արդյոք պայմանագրերի կնքման համապատասխան հիմքերը:		x	Գնումների պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է միայն տվյալներ հաղթող մասնակցի, գնման առարկայի, գնման մեթոդի ու գնի մասին, ինչպես նաև պայմանագրի կնքման ամսաթիվը:
24	Հավասարապես մատչելի՞ է արդյոք գնումների գործընթացների վերաբերյալ պատշաճ և լիարժեք տեղեկությունը բոլոր մասնակիցների համար:	x		Գնումների մասին օրենսդրությունը, բացի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալներից, ապահովում է մրցույթային հրավերի համապատասխան հրապարակայնություն:
	Ռիսկի տոկոս	**58.33**		

© Թրանսփարենսի Ինթերնեշնլ

Հավելված Զ

Հանրային գնումների համաշխարհային ծրագիր

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Ցուցանիշ /2006թ. համար/	Տոկոս
1	Պլաններում ու ծրագրերում ներառված պայմանագրերի մասնաբաժինը	100
2	Հանրային լսումների ենթարկված գնումների մասնաբաժինը	տվյալներ առկա չեն
3	Գնումների մասին օրենսդրության համապատասխան իրականացված պայմանագրերի մասնաբաժինը	71
4	Մրցույթների միջոցով իրականացվող գնումների մասին պայմանագրերի մասնաբաժինը	68
5	Մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը լուծված պայմանագրերի մասնաբաժինը	0
6	Փոփոխված պայմանագրերի մասնաբաժինը	13
7	Վճարման ուշացումով պայմանագրերի մասնաբաժինը	0
8	Կատարված պայմանագրերի մասնաբաժինը	100
9	Իրավական/դատական գործընթացներով բողոքարկված պայմանագրերի մասնաբաժինը	0
10	Միջնորդության/վեճերի լուծման գործընթացներով բողոքարկված պայմանագրերի մասնաբաժինը	0
11	Անվավեր համարված պայմանագրերի մասնաբաժինը	0
12	Ինտերնետային կայքերում հրապարակված պայմանագրերի մասնաբաժինը	100
13	Իրենց պայմանագրերը ինտերնետային կայքերում հրապարակած կառույցների մասնաբաժինը	տվյալներ առկա չեն
14	ԶԼՄ-ներով հրապարակված պայմանագրերի մասնաբաժինը	100
	Ռիսկի տոկոս	**19.57**

© Թրանսպարենսի Ինթերնեշնլ

Հավելված է

Հանրային գնումների համաշխարհային ծրագիր

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Գործոն	Աղբյուր	Միավոր	Կշիռ	Ռիսկի տոկոս
Քաղաքական համակարգ	Հասարակության վստահություն քաղաքական գործիչների նկատմամբ	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	1.80	0.33	73.89
	Կառավարության կողմից ընդունվող որոշումների անկողմնակալություն	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	2.40	0.33	
	Հանրային քաղաքականության թափանցիկություն	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	3.50	0.33	
Վարչարարություն	Հանրային ռեսուրսների պատշաճ հատկացում	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	2.70	0.33	67.78
	Կանոնակարգերի պարզություն	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	3.00	0.33	
	Պետական մարմինների կողմից կատարվող ծախսերի արդյունավետություն	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	3.10	0.33	
Դատական համակարգ	Դատական իշխանության անկախություն	«Համաշխարհային մրցունակության զեկույց»	2.30	0.33	66.11
	Դատարանների անաչառություն	«Տնտեսական ազատությունը աշխարհում» զեկույց	3.00	0.33	
	Իրավական համակարգի օրինավորություն	«Տնտեսական ազատությունը աշխարհում» զեկույց	5.00	0.33	
Ռիսկի միջինացված տոկոս					**69.26**

© Թրանսփարենսի Ինթերնեշնլ

© Տարածաշրջանային զարգացման կենտրոն /
Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան

Հայաստան, Երևան 0001, Բելյակովի 9
Հեռախոս՝ (374 10) 585 578, 526 914
Ֆաքս՝ (374 10) 54 74 60
Էլ. հասցե՝ crd@transparency.am
Ինտ. կայք՝ www.transparency.am